

## ՆԱԻՐԱ ՊԱՐՈՆՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ ՇԱԲՈՅԱՆ

### ԳՐԱԲԱՐԻ ԲԱՅԻ ԱՆՑՅԱԼ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔԻ ՌԻՍՈՒՑՈՒՄԸ ԲՈՒՀՈՒՄ

Խոսքի մասերի մեջ իր ձևերի բազմազանությամբ և քերականական կարգերի առատությամբ բացառիկ տեղ է գրավում բայը: Սույն հոդվածում հանգամանալից կներկայացվեն գրաբարի բայի ուսուցման առանձնահատկությունները բուհական համակարգում: Ուսուցումը սկսվում է խոսքային մեթոդներից դասախոսություն մեթոդի կիրառմամբ. նախ դասախոսը հաղորդում է ուսումնասիրվող նյութի թեման, մասնավորապես դասախոսության ընթացքում ներկայացվում է բայի կազմությունը, ներկայի և անցյալ կատարյալի հիմքերը և նրանցից կազմվող ձևերը, ապա հիմքակազմությունը՝ ըստ առանձին խոնարհումների, նշվում թեմայի նշանակությունն ու կարևորությունը՝ պահպանելով հաջորդականության սկզբունքը և կիրառելով «համեմատության» հնարը՝ ներկայացվող թեման կապելով նախորդ թեմաների հետ: Ուսանողներին գրաբար ուսուցանելու գործընթացի կարևորագույն օղակներից մեկը գրաբարի և գրական արևելահայերենի քերականական համակարգերի զուգադրական-համադրական վերլուծությունն է, ուստի բայ խոսքի մասի ուսուցումը սկսում ենք այդ երկու քերականական համակարգերի նշյալ թեմայի համապատասխանությունների և տարբերությունների ներկայացմամբ, ինչը նպաստում է նաև միջառարկայական կապերի ամրապնդմանը: Թեև գրաբարի ներկայի հիմքի ուսուցումը առանձնակի բարդություն չի ներկայացնում, այնուամենայնիվ արդյունավետ է ընդհատումներով դասախոսությունը:

Անցյալ կատարյալի հիմքի ուսուցումը փոքր-ինչ այլ է: Մեր կարծիքով, այս դեպքում անհրաժեշտ է փոխկապակցված աշխատանք դասախոսի և ուսանողի միջև: Քանի որ բուհական համակարգում առաջ-

նային է դարձել համազործակցային, ուսանողակենտրոն ուսուցման անցման անհրաժեշտությունը, ուստի կարևորում ենք ուսանողի ինքնուրույն, իմացական ակտիվության խթանմամբ ընթացող ուսուցման արդյունավետությունը և դասի ընթացքում դասախոսի և ուսանողների փոխկապակցված գործունեությունը, ինչը հատկապես անհրաժեշտ է դառնում հենց անցյալ կատարյալի հիմքի և խոնարհման տիպերի ուսումնասիրման ժամանակ:

Գրաբարում բայի անցյալ կատարյալի հիմքն ըստ կազմության երկու տեսակ է՝

ա) **արմատական** կամ **պարզ**, բ) **բաղադրյալ**:

Արմատական հիմքը նույնանում է բայարմատին, այսինքն՝ բայահիմքում ածանցներ չկան, օր.՝ անցանել բայի արմատը անց-ն է, հետևապես կատարյալի հիմքն էլ կլինի անց, այսպես նաև սպանանել, հապանել, տեսանել, ագանել(իմ), ուսանել(իմ), արգելուլ, լեսուլ(=մանրել, փշրել), առնուլ, հեծնուլ բայերի կատարյալի հիմքը կլինի՝ սպան, հատ, տես, ագ, ուս, արգել, լես, առ, հեծ:

Բաղադրյալ հիմքն էլ լինում է երկու տեսակ՝ **ցոյական** և **ի թույլ բաղադրիչ** ունեցող: Հիմքը ցոյական է կոչվում, քանի որ բայարմատի վրա ավելանում է **սց** կամ **եաց** (անշեշտ՝ **եց**→**եաց** > **եց**) բաղադրիչը: **Ց** տառի անունով (ցո) էլ հիմքը կոչվում է ցոյական, օր.՝ կաքաել – կաքալեաց, համբերել – համբերեաց, ծիծաղել(իմ) – ծիծաղեաց, անսալ – անսաց, իմանալ – իմաց, մերձենալ – մերձեաց և այլն: Հիմքը **ի թույլ** բաղադրիչով է կոչվում, քանի որ բայարմատից բացի կա նաև **ի** բաղադրիչ, օր.՝ երկնչել(իմ) – երկի, փախչել(իմ) – փախի, այտնուլ – այտի, ուռնուլ – ուռի և այլն:

Ուսանողի համար խիստ կարևորվում է անցյալ կատարյալի հիմքի ճշգրիտ որոշումը,

անհրաժեշտ է ստույգ իմանալ, թե որ բայը ինչ տիպի հիմք է ունենում: Մասնավորապես՝ **ե** և **ի** խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի հիմքը *բաղադրյալ-ցոյական* է. կազմված է բայարմատից և **եաց** (անշեշտ՝ **եց**) բաղադրիչից: Այսպես՝ արշաել-արշալեաց, գործել-գործեաց, կոչել-կոչեաց, պատառել-պատառեաց, խօսել(իմ)-խօսեաց, նայել(իմ)-նայեաց, ողորմել(իմ)-ողորմեաց, պատերազմել(իմ)-պատերազմեաց և այլն: **Ե** խոնարհման պարզ բայերից հետևյալ հինգ բայերն ունեն **աց** բաղադրիչով անցյալ կատարյալի հիմք՝ *ասել-ասաց, գիտել-գիտաց, կարել-կարաց, մարթել-մարթաց, մերկել-մերկաց*: Այս խոնարհման բայերից բացառություն են կազմում հետևյալ չորս բայերը՝ *ածել, բերել, հանել, հեղուսել*, որոնք ունեն պարզ կամ արմատական հիմք՝ համապատասխանաբար՝ *ած, բեր, հան, հեղոյս*: **Ի** խոնարհման պարզ բայերից բացառություն են կազմում *նստել(իմ)* և *զգածել(իմ)* բայերը, որոնք հանդես են գալիս պարզ կամ արմատական հիմքով՝ *նստի* (անշեշտ՝ *նստի*) և *զգած*: *Դիպիմ* բայը՝ զուգահեռաբար *դիպ* և *դիպեաց* հիմքերով: **Ե** խոնարհման ածանցավոր բայերն ունեն *արմատական հիմք*, օր.՝ անցանել-անց, գտանել-գիտ (անշեշտ՝ գտ), ելանել-ել, հատանել-հատ և այլն: Հատկանշական է, որ **ե** խոնարհման բազմապատկական ածանցներ ունեցող բայերի անցյալ կատարյալի հիմքը բաղադրյալ-ցոյական է (եաց բաղադրիչով), ընդ որում՝ ածանցները պահպանվում են հիմքում՝ բեկտել – բեկտեաց, խոցոտել – խոցոտեաց: **Ի** խոնարհման **ան** սուկաձանց ունեցող բայերն ունեն *արմատական հիմք*՝ անկանել(իմ)-անկ, բուսանել(իմ)-բոյս (անշեշտ՝ բուս), շիջանել(իմ) – շէջ (անշեշտ՝ շիջ), սնանել(իմ) – սուն (անշեշտ՝ սն): **Ի** խոնարհման **չ, նչ** սուկաձանցներ ունեցող բայերի անցյալ կատարյալի հիմքում այս ածանցները դուրս են ընկնում, բայարմատին կցվում է **ի** բաղադրիչը, և այս բայերը հանդես են գալիս **ի թոյլ բաղադրիչ** ունեցող բաղադրական հիմքով: Այսպես՝ թռչել(իմ) – թռի, փախչել(իմ) – փախի, երկնչել(իմ) – երկի, յարնչել(իմ) – յարի և այլն: **Ա** խոնարհման թե՛ պարզ, թե՛

ածանցավոր բայերն ունեն *բաղադրյալ-ցոյական* հիմք՝ կազմված բայարմատից և **աց** բաղադրիչից, այսինքն՝ կատարյալի հիմքում ածանցները դուրս են ընկնում, միայն այն տարբերությամբ, որ **ա** խոնարհման **են** սուկաձանց ունեցող բայերը կատարյալի հիմքում ստանում են **եաց (եց)** բաղադրիչը: Օրինակներ՝ անսալ-անսաց, լալ-լաց, գողանալ-գողաց, ստանալ-ստաց, բայց՝ մերձենալ-մերձեաց, յագենալ-յագեաց: **Ա** խոնարհման բայերից բացառություն է կազմում չորս բայ՝ *բանալ, թանալ, բառնալ, դառնալ*. բանալ և թանալ բայերի կատարյալի հիմքերն են՝ համապատասխանաբար *բաց* և *թաց*, իսկ բառնալ և դառնալ բայերի կատարյալի հիմքում վերականգնվում է արմատի **ծ** հնչյունը՝ *բարծ* և *դարծ*: **Ու** խոնարհման բայերի դեպքում հիմքի դեր է կատարում բայարմատը, այսինքն՝ այս բայերի (թե՛ պարզ, թե՛ ածանցավոր) կատարյալի հիմքը *պարզ* կամ *արմատական* է: Այսպես՝ թողուլ-թող, զենուլ-զեն, զբօսնուլ-զբօս, հեղձնուլ-հեղձ և այլն: **Ն** սուկաձանց ունեցող այսպես կոչված **նում-չիմ** փոխանցման մի շարք բայեր (14 բայ) անցյալ կատարյալի հիմքում ունեն **ի թոյլ բաղադրիչ**, դրանք են՝ *այտնուլ-այտի, զարթնուլ-զարթի, խափնուլ-խափի, հարթնուլ-հարթի, մածնուլ-մածի, շրտնուլ-շրտի, ոտնուլ-ոտի, պակնուլ-պակի, պշնուլ-պշի, սարտնուլ-սարտի, ցածնուլ-ցածի, ցասնուլ-ցասի, քաղցնուլ-քաղցի*: **Ու** խոնարհման բայերից բացառություն են կազմում հետևյալ վեց բայերը, որոնք ունեն ցոյական հիմք՝ *զգենուլ-զգեաց* (անշեշտ՝ *զգեց*), *ընկենուլ-ընկեաց* (անշեշտ՝ *ընկեց*), *ընթեռնուլ-ընթերց*, *լնուլ-լից* (անշեշտ՝ *լց*), *խնուլ-խից* (անշեշտ՝ *ից*), *յենուլ-յեց*:

Բացատրած նյութը հստակ պատկերացնելու և ամրապնդելու համար ուսուցման գործնական մեթոդներից կիրառում ենք վարժությունների մեթոդը՝ ուսանողներին հանձնարարելով համապատասխան գրավոր վարժություններ: Վարժությունների մեթոդը կիրառելիս մտավոր և գործնական աշխատանքները փոխկապակցվում են: Գրավոր վարժությունը նպաստում է սովորողների ձեռք բերած գիտելիքների ամ-

րապնդմանն ու կայունացմանը<sup>1</sup>: Գրաբարի բայ խոսքի մասը ուսուցանելիս դասախոսը պիտի տիրապետի զանազան մեթոդների կիրառման հմտությանը, հատկապես ուսանողի կողմից տասնյակ բայերի մտապահման համար: Ուսուցման փոխգործուն մեթոդների կիրառումը թույլ է տալիս նյութը ներկայացնել մատչելի, հետաքրքիր և պատկերավոր ձևով, որը նպաստում է գիտելիքների ավելի խոր յուրացմանը: Այդ բայերը մտապահելու համար առաջնահերթ է դառնում մատչելիության սկզբունքը, ընդ որում՝ դասախոսից պահանջվում է ուսուցումն այնպես կազմակերպել, որ անպայման հաշվի առնվեն սովորողների իրական հնարավորությունները: Ուսանողների գործուն մասնակցությամբ կատարում ենք բայերի թեմատիկ խմբավորում: Բայ խոսքի մասի ուսումնասիրումը խորհրդանիշ բառերի միջոցով նպատակահարմար է դիրակտիկական մատչելիության, ինչպես նաև կյանքի հետ կապի սկզբունքների կիրառման տեսանկյունից, նաև փորձում ենք իմաստային, քերականական և պատկերային աղերսներ ստեղծել մի շարք բայերի միջև, այսպես՝ ածել (բերել) – բերել, կարել (կարողանալ) – մարթել (կարողանալ) կամ հարթնուլ (խրտնել, փախչել) – սարտնուլ (խրտնել, փախչել), այտնուլ (ուռչել) – ոռնուլ (մեծանալ, ընդարձակվել) բայերը կարելի է մտապահել որպես հոմանիշներ: Ու խոնարհման նում–չիմ փոխանցումով բայերի դեպքում ուսանողները մտովի վերարտադրում են քնած մարդու արթնանալու տեսարանը՝ զարթնուլ (արթնանալ) – ոստնուլ (վերցատկել) – քաղցնուլ (քաղց զգալ) – ցասնուլ (բարկանալ) – պակնուլ (սաստիկ վախենալ, դողալ) – շրտնուլ (շփոթվել, իրեն կորցնել) – հարթնուլ // սարտնուլ (փախչել) – մածնուլ (կաչել) – այտնուլ // ոռնուլ (ուռչել) – ցածնուլ (բարկությունը իջնել, մեղմանալ), նաև՝ խափնուլ (կուրանալ) – պչնուլ և այլն:

Ե խոնարհման **ան** սուկաձանցավոր բայերը ևս կարելի է հիշել պատկերային մտածողությամբ՝ մտովի վերարտադրելով այսպես կոչված որևէ անձանոթի՝ այգին

փնտրելու, գտնելու, ծառի պտղից համտեսելու տեսարանը՝ հարցանել – անցանել – հատանել – հասանել – մտանել – ցուցանել – տեսանել – ելանել – գտանել – զարկանել – արկանել – իջանել – բեկանել – հարկանել – սպանանել (տե՛ս նկար 1), **ու** խոնարհման **ն** սուկաձանցավոր բայերի համար՝ «հյուրի գործարանի» տեսարանը՝ զգենուլ (հագնել արտահագուստը) – լնուլ (լցնել հյուրը) – խնուլ (փակել շիշը) – ընկենուլ (զգել արկղի մեջ) – յենուլ (հենվել, կոթնել) – ընթեռնուլ, իմաստային աղերս կա նաև **ի** խոնարհման **չ**, **նչ** աձանցավոր բայերի ցանկի մեջ՝ փախչել (իմ) – կորնչել(իմ), մարտնչել(իմ)–հանգչել(իմ), մատչել(իմ) (դիպչել) – կառչել(իմ), երկնչել(իմ) – թռչել(իմ), յարնչել(իմ): Իսկ **ի** խոնարհման **ան** սուկաձանցավոր բայերը **ե** խոնարհման համանման բայերից անորոշ դերբայի ձևերում տարբերելու համար զուգորդական կապ ենք ստեղծում մարդու կյանքի անցած ուղու հետ՝ ծնունդից մինչ մահ: Այսպես՝ ծնանել(իմ) – սնանել(իմ) – բուսանել(իմ) – ազանել(իմ) – ուսանել(իմ) – սկսանել(իմ) – անկանել(իմ) – շիջանել(իմ) – մեռանել(իմ) (տե՛ս նկար 2):

Ե խոնարհման պարզ բայերի բացառությունները ճշգրիտ մտապահելու համար մենք կիրառում ենք մտապահելու այսպես կոչված թվային հնարք, բացառություն կազմող ինը բայերը բաժանելով 5+4 կառույցի (հինգ բայ՝ **աց** բաղադրիչով, չորս բայ՝ պարզ կամ արմատական հիմքով), իսկ **հեղուսել** (մեխել) – **հանել** (մեխը), **ասել** (դասախոսը պատմում է) – **գիտել** (ուսանողն հասկանում է) բայերը ուսանողները կրկին հիշում են պատկերային մտածողությամբ:

Վերը նշված սկզբունքների կիրառումն անհրաժեշտ պայման է տվյալ դասընթացի արդյունավետ կազմակերպման համար: Եթե դասախոսը չակտիվացնի ուսանողների ճանաչողական գործունեությունը, դրանց իրականացման համար չկիրառի համապատասխան մեթոդներ, չորոնի նոր ուղիներ ու միջոցներ, ապա սովորողները դժվարությամբ կյուրացնեն ուսումնական նյութը:




1 Տե՛ս Ամիրջանյան Յու., Մահակյան Ա., Մանկավարժություն, Եր., 2005, էջ 136:




Ե խոնարհում



Հարցանել – անցանել – հատանել – հասանել – մտանել – ցուցանել – տեսանել – ելանել – գտանել – զարկանել – արկանել – իջանել – բեկանել – հարկանել – սպանանել

Նկար 2

<i>Ի խոնարհում</i>	
	<i>Մարդ</i>
	<i>ծնանել (իմ)</i>
	<i>սնանել (իմ)</i>
	<i>բուսանել (իմ)</i>
	<i>ազանել (իմ)</i>

	<p><i>ուսանել (իմ)</i></p>
	<p><i>սկսանել (իմ)</i></p>
	<p><i>անկանել (իմ)</i></p>
	<p><i>շիջանել (իմ)</i></p>
	<p><i>մեռանել (իմ)</i></p>

nairaparonyan@ysu.am, ruzshab@ysu.am

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976:
2. Ամիրջանյան Յու., Սահակյան Ա., Մանկավարժություն, Եր., 2005:
3. Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Գրաբարի ձեռնարկ, Եր., 2004:
4. Մանկավարժական միտք, 2013, N3-4:
5. Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ, Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ, Վանաձոր, 2008:

## TEACHING THE BASE OF THE PAST SIMPLE OF THE GRABAR (OLD ARMENIAN) VERB IN HIGHER EDUCATIONAL INSTITUTIONS

N. PARONYAN, R. SHABOYAN

In the process of teaching verb as a part of speech in Grabar the lecturer should have the skill of implementing various methods, especially in the purpose of making the students memorize dozens of verbs. In order to memorize those verbs the principle of accessibility becomes predominant; the lecturer should organize the teaching process in a way that the real opportunities of the learners are taken into consideration. Thematic grouping of words is organized with the active participation of students. The investigation of the verb as a part of speech through symbolic words is expedient from the point of view of didactic availability and the implementation of principles of links with life; we also try to create semantic, grammatical and iconic links between a lot of verbs.

## **ПРЕПОДАВАНИЕ ОСНОВ ГЛАГОЛА ПРОШЕДШЕГО ВРЕМЕНИ СОВЕРШЕННОГО ВИДА ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА В ВУЗ–АХ**

*Н. ПАРОНЯН, Р. ШАБОЯН*

Обучая глагол древнеармянского языка преподаватель должен обладать новыками применения различных интерактивных методов, особенно для запоминания десятков глаголов студентами. Для запоминания этих глаголов становится приоритетом принцип доступности. Преподаватель обязан организовать обучение учитывая реальные возможности учащихся. С активным участием студентов совершается тематическая группировка глаголов. Изучение глагола с помощью слов–символов целесообразно с дидактической точки зрения, а также с точки зрения коммуникации с принципами связи с действительностью, также пытаемся найти некоторые семантические, грамматические и визуальные аналогии между рядом глаголов.